

ւանդութիւններուն մէջ, քան Վալաքիոյ հայերը, որոնց մայրենի լեզուն երկար ատեն տաճիկերէնն եղաւ: Եթէ Վալաքիան այսօր հայութիւն մը ունի աւելի հոծ ու աւելի սերտ կապուած մայր ժողովուրդին հետ՝ անկէ է որ միշտ ոչոքուեցաւ նորեկներով ու անոնց բերած նոր պատուատուր: Մորտովան, ընդհակառակը, այդ պատուատուր չտեսաւ, ու աւելցի իր ուժովը:

Նաչի հայ դպրոցը դոյութիւն ունէր ԺԹ դարու սկիզբն իսկ:

Նաչի դպրոցը պահ մը վարած է Կիրակոս անուն պոլսեցի վարժապետ մը, բայց իր հակամակաւարժական դրութեամբ այնքան դժգոհ ձգած է հասարակութիւնը, որ շուտով ճամբած են զինքը: Այս է մեր ունեցած առաջին ծանօթութիւնը Նաչի հայ դպրոցին վրայ, ուր նարեկն էր աշակերտին իտէպը, ու Ֆալախան եւ բանակոթը՝ հիմը կրթութեան:

1838-ին իրր ուսուցիչ հրաւիրուած է Աբրոբէ Պապիկեան, Վիեննայի Մխիթարեան վարժարանէն, ծանօթ հայ լեզուի, Քրանսերէնի եւ գերմաներէնի: Պապիկեան քիչ ժամանակէն գրաւած է բոլորին յարգանքն ու համակրանքը: Այդ ժամանակ էր որ դպրոցական գործը կը սկսէր լուրջ հոգածութեան առարկայ դառնալ, մանաւանդ շնորհիւ Յակոբ Պըյըզլիուի ջանքերուն:

Այս մարդն է որ դարաշրջուի մը կը բանայ Մորտովայի հայութեան համար, եւ կ'արժէ որ անոր վաստակը արձանագրուի:

Մինչեւ Յակոբ Պըյըզլիու (1809-1881) Մորտովայի հայերը զանցառելի տարր մը կը ներկայացնէին իրրեւ մտաւորական ուժ, հակառակ իրենց առեւտրական համբաւին եւ եկեղեցիներու թիւին ու անոնց բարեգարչութեան: Ո՛չ միայն զրկուած էին քաղաքական ու քաղաքային իրաւունքներէ, այլ անփառունակ վիճակի մէջ մնացեր էին իրենց դպրոցները: Յակոբ Պըյըզլիու իր ստացած կրթութեամբը եւ իր ունեցած կապերովը ուսմէն մեծամեծներուն հետ՝ կրցաւ բազմալի փոփոխութիւն մը բերել հայութեան կեանքին մէջ: Իր կենսագրութիւնը պատմութիւնն է Մորտովայի հայութեան ազատագրութեան, կ'ըսէ իր

կենսագիրը (տեսնել Grigorie M. Buiuciu-ի կենսագրութիւնը, հրատարակութիւն Academia Romana-ի Bucaresti, 1914, P. P. 26-38): Իրմէ առաջ տխուր էր Մորտովայի հայութեան վիճակը: Թէեւ դարերէ ի վեր հաստատուած իշխանագեաութեան մէջ եւ չունենալով հանդերձ մտածումը Հայաստան դառնալու, հայերը, իրենց որդեգրած հայրենիքին մէջ՝ օտարականի տեղ կը դրուէին. տեղացի ժողովուրդը, յունական կրօնական մոլեռանդութենէն դրդուած, կը խորշէր հայերէն. երկրին մեարսողութեամբ կ'արգիլէր իր հաւատացեալները նոյնիսկ սեղան նստիլ հայերուն հետ. իսկ երկրին օրէնքները՝ ժառանգուած ծագումով յոյն իշխաններէ՝ քաղաքացիական իրաւունքները կը զլանային հայերուն եւ հայերն ալ դեր ունէին իրերու այս դրութեան մէջ. անոնք, իրենց պատեանը քաշուած, մեկուսացած էին կեանքէն եւ շփում չունէին տեղացիներուն հետ: Պէտք է նկատել սակայն որ անոնք կը պահէին իրենց կրօնն ու լեզուն: Յակոբ Պըյըզլիու դառաւ որ դպրոցի միջոցաւ միայն պիտի յաջողի հայ դպրութիւնը խառնել տեղական կեանքին, զանոնք սերտ կապի մէջ դնել տեղացիներուն հետ՝ պահպանելով հանդերձ անոնց լեզուն եւ կրօնը: Բայց հող էր գլխաւոր գծաւորութիւնը: Հայերը չէին ընդունիր մուրտով վարժարաններուն մէջ, իսկ հայերը չունէին իրենց տիպար դպրոցները եւ չէին ուզէր ալ ունենալ՝ հակառակ անոր որ եկեղեցիները այդ բանին համար ունէին բաւարար եկամուտ: Միւս կողմէ եկեղեցիները՝ կը կառավարուէին ու կը մատակարարուէին ինքն իրենց գլխուն, երբեմն էջմիածնի, երբեմն Պոլսոյ Պատրիարքին հրամաններովը:

Դպրոցական գործին ձեռնարկելէ առաջ Յակոբ Պըյըզլիու փորձեց ուսմանահայ դպրութիւնը ազատել արտասահմանի հայ կղերին միջամտութենէն, եւ զայն ենթարկել ներքին զօրաւոր կազմակերպութեան մը տեղական իշխանութեանը հակակշիռն տակ: Այս բանին համար պէտք եղաւ նաեւ կուուիլ հայոց կրօնական մոլեռանդութեան դէմ, կը նկատէ Պըյըզլիուի կենսագիրը: Յակոբ Պըյըզլիուի զօրավիզ եղաւ իր Մկրտիչ եղբայրը, որ իրմէ աւելի տարեց՝ մեծ յարգանք կը վայելէր հա-